ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՆՈՐ ԿՅԱՆՔԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

Араратская область

СЕЛЬСКАЯ ОБШИНА̀ СЕЛО
НОР КЯНК

գ.Նոր կյանք
հեռ. 0234-62901

с.Нор кянк
тел. 0234-62901

«08». «դեկտեմբերի» 2016 թ N 112

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ռ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Կից ուղարկվում է Արարատի մարզի Նոր կյանք համայնքի ավագանու թիվ 22-25 որոշումների կրկնօրինակները:

Առդիր 10/տաս/ թերթ:

ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

Կատ. Ա. Մայիլյան
Հեռ. 0234-62901

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Կյանք համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Կյանք, ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 դեկտեմբերի 2016թվականի N 22

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12- րդ հոդվածի պահանջներով՝
Ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է.
Հաստատել Նոր կյանք համայնքի ավագանու թիվ 8 նիստի օրակարգը.
1/ 2017թվականի համար Նոր կյանք համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը սահմանելու, համայնքապետարանի աշխատակազմի, մշակույթի տան և «Նոր կյանքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի, դրույքաչափերի և աշխատավարձերի չափաքանակի հաստատում.
2/ Նոր կյանք համայնքի 2017թվականի համար տեղական տուրքերի և վճարների չափաքանակի հաստատում.
3/Նոր կյանքի համայնքապետարանին պատկանող ծառայողական ավտոմեքենան վաճառելու մասին:

Ավագանու անդամներ

Կողմ -5/հինգ/	Դեմ -0	Ձեռնպահ -0
1.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԷՄՄԱ		
2.ԱՄԻՐՅԱՆ ՀՈՎՍԵՓ		
3. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԼԲԵՐՏ		
4.ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ		
5.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՂՎԱՆ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔ

ՈՐՈՇՈՒՄ
« 01» դեկտեմբերի 2016թվականի N23_

2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԵՎ «ՆՈՐ ԿՅԱՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐԻ ՉԱՓԱՔԱՆԱԿԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 26-րդ կետերի պահանջներով՝ Ավագանին ՈՐՈՇՈՒՄ է՝

1/ Սահմանել Նոր կյանք համայնքի ղեկավարի ամսական աշխատավարձը՝250000 /երկու հարյուր հիսուն հազար/դրամ,

2/Հաստատել Նոր կյանքի համայնքապետարանի աշխատակազմի թվաքանակը, հաստիքացուցակը, դրույքաչափերը և աշխատավարձերի չափը, համաձայն N1 հավելվածի.

3/Հաստատել Նոր կյանքի մշակույթի տան աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը, դրույքաչափերը և աշխատավարձերի չափը, համաձայն N2 հավելվածի.

4/ Հաստատել «Նոր կյանքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը, դրույքաչափերը և աշխատավարձերի չափը, համաձայն N3 հավելվածի.

Ավագանու անդամներ
կողմ 5/հինգ/ դեմ0/զերո/ ձեռնպահ 0/զերո/
Է. Աբրահամյան
Հ. Ամիրյան
Ա. Բաղդասարյան
Ա. Աբրահամյան
Ս. Սարգսյան

ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ N1
ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 01-Ի ԹԻՎ 23/2 ՈՐՈՇՄԱՆ

ՆՈՐ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 10/տաս/:

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ)
ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
2.Համայնքի ղեկավարի տեղակալ	1	*126000*
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
3.Աշխատակազմի քարտուղար /1.2-1/	1	*155000*
4.Աշխատակ. գլխավոր մասնագետ /2.3-1/	1	*150000*
5.Աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1/	1	*120000*
6.Աշխատակ.առաջին կարգի մասնագ. /3.2-1/	1	*116000*
7.Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ /3.3-1/	1	*115000*

ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ		
8.Հարկահավաք	1	*115000*
9.Վարորդ	1	*130000*
10.Հավաքարար	1	*77000*

ՀԱՎԵԼՎԱԾ N2
ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 01-Ի

ԹԻՎ 23/3 ՈՐՈՇՄԱՆ

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ «7» /յոթ/

1.Մշակույթի տան տնօրեն	1	*115000*
2.Գրադարանավար	1	*85000*
3.Մարզիչ	1	*77000*
4.Հնոցապան	1	*77000*
5. Հնոցապան	1	*77000*
6.Հավաքարար	1	*77000*
7.Պահակ	1	*77000*

ՀԱՎԵԼՎԱԾ N3
ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 01-Ի

ԹԻՎ 23/4 ՈՐՈՇՄԱՆ

« ՆՈՐ ԿՅԱՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ » ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ «14» /տասնչորս/

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ)
1. Տնօրեն	120000
2.Դաստիարակ	77000
3.Դաստիարակ	77000
4. .Դաստիարակ	77000
5. .Դաստիարակ	77000
6.Դաստիարակի օգնական	77000
7.Դաստիարակի օգնական	77000
8.Խոհարար	77000
9.Հաշվապահ	77000
10.Երաժշտութ. դասատու	77000
11.Բուժքույր	77000
12.Տնտեսվար	77000
13.Պահակ	77000
14.Խոհարարի օգնական	77000

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ՄԱՅԻԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Կյանք համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Կյանք, ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 դեկտեմբերի 2016 թվականի N 24

ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԱՔԱՆԱԿԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով՝

Ավագանին ՈՐՈՇՈՒՄ է՝

Նոր կյանք համայնքի 2017թվականի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների/ներառյալ ոչ հիմնական/ շինարարության/տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է .

ՀԻՄՆԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ա/ մինչև 300 քառ.մ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200քառ.մ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ -10000դրամ,

բ/ սույն կետի ա/ ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա/ 201-ից մինչև 500 քառ.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ - 30000 դրամ,

բբ/ 501-ից մինչև 1000 քառ.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ - 40000 դրամ,

բգ/ 1001-ից մինչև 3000 քառ.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ - 50000 դրամ,

բդ/ 3001 և ավելի քառ.մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ - 70000 դրամ.

ՈՉ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ

գ/ մինչև 20 քառ.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ - 3000 դրամ,

դ/ 20 և ավելի քառ.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ - 5000 դրամ,

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրութ-

յամբ սահմանված, շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա/ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կցակառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ -3000դրամ,

բ/ բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կցակառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի ա/ ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով:,

գ/ նախատեսվում է միայն կցակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա սույն օրենքի իմաստով այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների , քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է - 5000 դրամ,

1, 2 և 3 կետերի նկատմամբ կիրառել 0,5 գործակիցը:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է.

1/ ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա/ մինչև 26 քառմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում -2500դրամ,

բ/ 26-ից մինչև 50 քառմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում - 10500դրամ,

գ/51-ից մինչև 100 քառմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում - 13500դրամ,

դ/101-ից մինչև 200 քառմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում - 20500 դրամ,

ե/201-ից մինչև 500քառմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում - 25500դրամ,

զ/501 և ավելի քառմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում -45500 դրամ,

բ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար

ա/ մինչև 26 քառմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում -2500 դրամ,
բ/ 26-ից մինչև 50 քառմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում - 10500դրամ,
գ/51-ից մինչև 100 քառմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում - 13500դրամ,
դ/101-ից մինչև 200 քառմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում - 20500 դրամ,
ե/201-ից մինչև 500քառմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում - 25500դրամ,
զ/501 և ավելի քառմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում -45500 դրամ,

5. Համայնքի տարածքում

ա/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար յուրաքանչյուր քառմ-ի համար՝ - 350 դրամ,

բ/ հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ -150,0 հազ. դրամ,

գ/ հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է.
հիմնական շինությունների ներսում՝
ա/ մինչև 26 քառմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ - 3000դրամ,
բ/ 26-ից մինչև 50 քառմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ - 6000դրամ,
գ/51-ից մինչև 100 քառմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ - 12000 դրամ,
դ/101-ից մինչև 200 քառմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ - 16000դրամ,
ե/201-ից մինչև 500քառմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ - 22000դրամ,
զ/501 և ավելի քառմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ - 35000դրամ,
ոչ հիմնական շինությունների ներսում՝
ա/ մինչև 26 քառմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ -1000դրամ,
բ/ 26-ից մինչև 50 քառմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ - 1500դրամ,
գ/51-ից մինչև 100 քառմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի

օբյեկտի համար՝ -3000դրամ,

դ/101-ից մինչև 200 քառմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ -5000 դրամ,

ե/201-ից մինչև 500քառմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ - 10000դրամ,

զ/501 և ավելի քառմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ - 20000 դրամ,

6. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները /սաունաները/, խաղատները ժամը 24:00 - ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է.

ա/ առևտրի օբյեկտների համար - 25,0 հազ. դրամ,

բ/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար - 50,0 հազ. դրամ,

գ/ բաղնիքների /սաունաների/ համար - 200,0 հազ. դրամ,

դ/ խաղատների կազմակերպման համար - 500,0 հազ. դրամ,

ե/ շահումով խաղերի կազմակերպման համար - 250,0 հազ. դրամ,

զ/ վիճակախաղերի կազմակերպման համար - 100,0 հազ. դրամ,

7.Համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր ամսվա համար

ա/ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային %/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար -1000,0 դրամ,

բ/ թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային %/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար -2500,0 դրամ,

գ/ այլ արտաքին գովազդի համար - 500,0 դրամ,

դ/ դատարկ գովազդային վահանակների համար - 700,0 դրամ,

ե/ արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց սահմանվում է -125 դրամ,

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի կրկնօրինակները տրամադրելու համար տեղական տուրքը սահմանել - 2000,0 դրամ.

9.Համայնքի տարածքում մարդատար տաքսու ծառայություն իրականացնելու համար տեղական տուրքը սահմանել -5000,0դրամ,

10. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու տեղական ինքնակառավարման մարմնի ծառայության համար փոխհատուցման վճար սահմանել - 1000,0 դրամ,

11. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու, վարձակալությամբ տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և նման աշխատանքների համար փոխհատուցման վճար սահմանել - 1000,0 դրամ,

12. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցների վճար սահմանել -1000,0դրամ:

Ավագանու անդամներ

կողմ 5/հինգ/	դեմ0/զերո/	ձեռնպահ 0/զերո/
Է. Աբրահամյան		
Հ. Ամիրյան		
Ա. Բաղդասարյան		
Ա. Աբրահամյան		
Ս. Սարգսյան		

ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Կյանք համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Կյանք, ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«01» դեկտեմբերի 2016թվականի N25

ՆՈՐ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրա - պետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով՝

Ավագանին ՈՐՈՇՈՒՄ է.
Հիմք ընդունելով Նոր կյանք համայնքի ղեկավարի թիվ 69, 10.11.2016թվականի որոշումը և այն, որ հրավիրված «Արտկապիտալ» ՍՊԸ-ի կողմից ավտոմեքենան գնահատվել է 3575000/երեք միլիոն հինգ հարյուր յոթանասուն հինգ հազար/ դրամ, ուստի հայտարարություն տալ մասսայական լրատվամիջոցներով VAZ 217250 մակնիշի ավտոմեքենայի վաճառքի համար՝ 3575000/երեք միլիոն հինգ հարյուր յոթանասուն հինգ հազար/ դրամ մեկնարկային գնով:

Ավագանու անդամներ

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՂՎԱՆ
2. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԷՄՄԱ
3. ԱՄԻՐՅԱՆ ՀՈՎՍԵՓ
4. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԼԲԵՐՏ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՍԱՐԳՍՅԱՆ